ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ ԽՐԻՄՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ *

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան, Արշակ Չոպանյան, Կոմիտաս, Էջմիածնի հոգևոր ճեմարան, Մ. Եկմալյանի “Պատարագ”, Հայրապետական կոնդակ, բազմաձայնության մուտքը հայ եկեղեցի, հայ երաժշտություն:

“Ժողովու՛րդ Հայոց, շուրջդ նայէ.
ազգերն ամէն առողջացած անդամալոյծ
վիճակէն՝ դէպի նոր կեանք կը վազեն … Այո՛, չկայ
աշխարհիս վրայ ոչ ոք քեզ օգնական, ընդունայն
յուսով մի՛ սպասեր, դու ինքն ես քո օգնական,
ջանք արա, շարժի՛ր …”:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Ճիշտ 200 տարի առաջ՝ 1820 թ. ապրիլի 4-ին, Վանի Այգեստանի ամենահին ու հայտնի գերդաստաններից մեկում ծնված մանչուկի մասին հետագայում՝ 1878 թ., Բեռլինի վեհաժողովին ընդառաջ, օտարներն ասելու էին. “Մեծ մարդ մըն էր անիկա”[1], իսկ հարազատ ժողովուրդը, որին նա նվիրվեց անմնացորդ, նրան իրավամբ մեծարելու էր “Հայոց Հայրիկ” պատվանունով:

Ինչպես և Մեծն Կոմիտասը՝ Մ. Խրիմյանը մանուկ հասակում զրկվում է ծնողներից ու “դաստիարակւում է իւր բարեպաշտ հօրեղբօր Խաչատուրի մօտ: Նա ծանօթ էր Ս. Գրքին և իւր ծանօթութիւնն էլ աւանդում է իւր եղբօրորդուն, ուշիմ Մկրտչին”[2]:

** Ներկայացվել է 23. III. 2020 թ., գրախոսվել է 03. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 18. IV. 2020 թ.:*

[1] Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Երկեր, Երևան, 1988, էջ 435:

[2] Հանգիստ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց.- «Արարատ» (Էջմիածին), 1907, թիւ Ժ-ԺԱ, էջ Դ:

1848–1850-ին Մ. Խրիմյանն ուսուցչություն է անում Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասի դպրոցում՝ հանդես գալով հայրենասիրական քարոզներով, իսկ 1851-ին՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ, մեկնում է Կիլիկիա, ուսումնասիրում տեղի հայության կյանքը և փորձում իր նպաստը բերել կրթական գործի զարգացմանը:

Դառը ճակատագրի բերումով կորցնելով կնոջը, ում հետ ամուսնացել էր 1846 թվականին, ու դստերը՝ 1853 թ. 33-ամյա Մ. Խրիմյանն ընտրում է եկեղեցական ասպարեզը և վերադառնալով Վան՝ Աղթամարի վանքում 1854-ին ձեռնադրվում է վարդապետ: 1855-ին նա Կ. Պոլսում սկսում է հրատարակել "Արծուի Վասպուրական" պարբերականը, 1856-ին վերադառնում է Վան, դառնում Վարագա վանքի վանահայրը և 1857 թ. հիմնադրում Ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը: Վարագա դպրոցի հիմնադրումով Մկրտիչ վարդապետը դարձավ "հայ ազգագրութեան և ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան հիմնադիրը"[3]:

1860-ին Վասպուրականի Արծիվն այցելում է Արևելյան Հայաստան և ծանոթանում տեղի հայության կյանքին, իսկ 1862-ին ստանալով Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնն ու Ս. Կարապետ վանքի վանահայրությունը՝ հիմնադրում է նոր Ժառանգավորաց վարժարանը և հրատարակում "Արծուիկ Տարօնոյ" երկշաբաթաթերթը (1863–1865)՝ դրանց տնօրինությունը հանձնելով Գարեգին Սրվանձտյանին: Տարոնի հայկական գյուղեր կատարած այցելությունների ընթացքում նա փորձում է սահմանափակել թուրք և քուրդ աղաների հարստահարությունները, թեթևացնել հայ գյուղացու ծանր վիճակը:

1868-ին Էջմիածնում եպիսկոպոս օծված Մ. Խրիմյանը 1869 թ. սեպտեմբերի 4-ին ընտրվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարք և պայքարում Ազգային սահմանադրության վերանայման, ի մասնավորի՝ գավառաբնակ արևմտահայության պատվիրակների թիվն Ազգային ժողովում ավելացնելու համար: Կ. Պոլսում Խրիմյանը դարձավ առաջին "Հայաստանցի պատրիարքը", ինչպես նրան անվանում էին այդ օրերին: Մ. Խրիմյանին ընտրողները վստահ էին, որ սահմանադրական պայքարի այդ օրերին միայն նա կարող էր իր հեղինակությամբ և հմայքով, խոսքով ու գրչով իրականություն դարձնել հայ ժողովրդի նվիրական իղձերը և հույսերը: Հատկանշական է, որ նորընտիր Պատրիարքն իր պատրիարքական ուխտի ճառի մեջ 1869 թ. նոյեմբերի 12-ին ասել է. "Իմ վրաս Պոլսո պատրիարքի պես մի՛ նայիք, ես Հայաստանի ցավոց պատկերն եմ: Չգիտեմ, թե իմ նախորդքս ի՞նչպես միջնորդած են տերության՝ այս ցավոց դարմանը խնդրելու համար, բայց ես ազդու միջնորդություն մը պիտի ընեմ …"[4]: Եվ, իսկապես, Մ. Խրիմյանի պատրիարքության օրոք

[3] *Նույն տեղում, էջ Ե:*

[4] *Խմբագրական. Վասպուրականի արծիվը.– "Էջմիածին", 1957, ԺԱ, էջ 5:*

“Հայաստանի վիշտը” դարձավ “Հայաստանի հարց”, “Հայկական խնդիր”: Իր ողջ կյանքում Հայոց Հայրիկը՝ “պատրիարքի և կաթողիկոսի գահին վրան իսկ Հայաստանէն հետը բերած փուշէ պսակը գլխէն բնաւ վայր չառաւ: “Հայկական խնդիրը” իր պայուսակին մէջ դրած, իրեն հետը կը ճամփորդէր Վասպուրականէն Պոլիս, Փարիզ, Լոնտոն, Պերլին և մինչև գերեզման”[5]: Նա առաջին պատրիարքն էր, որի նախաձեռնությամբ Ազգային ժողովում քննության է առնվում գավառահայության հարստահարությունների խնդիրը, և 1872-ին թուրքական կառավարությանը ներկայացվում տեղեկագիր-բողոքագիր: Հայրիկը պահանջում է Ազգային Սահմանադրության վերաքննությունը և դրա գործադրումը նաև գավառում:

Իր գործունեությամբ Մ. Խրիմյանը հարուցում է թուրքական կառավարության և Կ. Պոլսի հայ մեծահարուստների թշնամանքը, ինչի հետևանքով 1873-ին հրաժարվում է պատրիարքությունից: Նույն թվականին հայ մեծ վիպասան Ռաֆֆին նկատել է. “Խրիմյանը հոգով բանաստեղծ է, իսկ սրտով առաքյալ: Նա հիշեցնում է մեզ հինգերորդ դարու անձնուրաց աբեղաներին, որք հոգևոր զինվորության ցուպը ձեռքներնին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պտտում էին Հայաստանում, ուսում, գիտություն և կրոնք տարածում”[6]:

1873–1878 թթ. Մ. Խրիմյանը “նստած էր Պոլսում անպաշտօն”[7]. նա զբաղվում է գրական գործունեությամբ՝ իրար ետևից գրում “Յիսուսի վերջին շաբաթը” (1876), “Վանգոյժ” և “Հայգոյժ” (1877), “Դրախտի ընտանիքը” (1878) աշխատություններն ու մի շարք բանաստեղծություններ:

1874-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարք ընտրված Ներսես եպիսկոպոս Վարժապետյանի առաջարկությամբ 1878-ին Մ. Խրիմյանը ղեկավարում է Բեռլինի կոնգրեսի հայկական պատվիրակությունը: “Պատվիրակության մեկնումի պահին հարց տվեցին Խրիմյան Հայրիկին, թե ի՞նչ լեզվով պիտի խոսի Բեռլինում, քանի որ, բացի հայերենից, նա այլ լեզու չգիտեր: Խրիմյան Հայրիկը պատասխանեց. “Ես պիտի գնամ Բեռլին, պիտի ներկայանամ վեհաժողովին ու պիտի արտասվեմ”: Նա հավատում էր, թե իր արտասուքով պիտի շարժեր խիղճն աշխարհի մեծամեծների: Եվ Խրիմյան Հայրիկը գնաց Բեռլին ու արտասվեց, սակայն մեծամեծների խիղճը չշարժվեց: Վերադարձին, հայոց դարավոր վշտի նվագող Հայրիկն իր առաքելության մասին պատմեց հետևյալը. “Ժողովու՛րդ հայոց, Բեռլին գնացինք, ներկայացանք վեհաժողովին ու տեսանք, որ ժողովի մեջտեղում դրված էր մի կաթսա՝ մեջը լիքը հարիսա: Բոլոր ազգերը իրենց ձեռքերում երկաթե շերեփներ բռնած՝ իրենց բաժին հարիսան էին վերցնում: Մենք հայերս էլ մեր շերեփը մտցրեցինք հարիսայի մեջ, սակայն այն պոկվեց մեր ձեռքից ու հալվեց կաթսայի մեջ: Մեր շերեփը թղթից էր”:

---

[5] *Հ. Ա ճ է մ ե ա ն. Հայոց Հայրիկ. “Նուագող վշտից հայրենեաց Հայոց”: Կենսագրութիւն, առաջին հատոր, Հայր Սիմոն Երեմեան-Ատրուշանի յառաջաբանով, Թաւրիզ, 1929, էջ 21:*

[6] *“Մշակ” (Թիֆլիս), 13. XII. 1873:*

[7] *Հանգիստ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, էջ Է:*

Հայ ազգը այդ օրվանից մանավանդ, հասկացավ երկաթե շերեփի պատմության իմաստը: Հետագա պատմական դեպքերը, հայերի հերոսական մարտնչումներն ու խարխափումները այլ բան չէին, եթե ոչ որոնումը մի երկաթյա փրկարար շերեփի, որը մի հուժկու հարվածով կարողանար փոխել սև ճակատագիրը հայ ազգի”[8]:

Բեռլինի կոնգրեսից հետո Մ. Խրիմյանը հիասթափվում է եվրոպական պետություններից և հանդես է գալիս ազգային-ազատագրական պայքարի կոչով: Հայ ժողովրդի փրկությունը, ուժը միասնականության, իր բազկի, իր հայրենասիրության մեջ է: “Ահա այն դասը, որը քաղել էր Խրիմյանը եվրոպական իր պատվիրակությունից”[9]. դաս և պատգամ, որն արդիական է նաև այսօր:

1879-ին Մ. Խրիմյանն ընտրվում է Վանի հոգևոր առաջնորդ, 1880 թ. այստեղ բացում է երկրագործական ուսումնարան, աջակցում Վանի “Սև խաչ” և Կարինի “Պաշտպան հայրենյաց” ազգային-ազատագրական գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը, որի համար հետ է կանչվում Կ. Պոլիս: 1890-ին Ազգային ժողովը Մ. Խրիմյանի նախաձեռնությամբ 2 տեղեկագիր-բողոքագիր է ներկայացնում թուրքական կառավարությանը. վերջինս ուխտի ուղարկելու անվան տակ նրան աքսորում է Երուսաղեմ:

1892 թ. մայիսին Մ. Խրիմյանն ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս և շարունակում հարազատ մնալ ազգային-ազատագրական շարժման իր դիրքորոշմանը: Այսպես՝ 1895-ին մեկնում է Պետերբուրգ և Նիկոլայ Երկրորդ ցարից հայցում նրա պաշտպանությունն Արևմտյան Հայաստանում խոստացած բարենորոգումների իրականացման համար, իսկ 1895–1896 թթ. թուրքական կառավարության կազմակերպած հայկական ջարդերի ժամանակ խնդրագրեր հղում ցարական պաշտոնյաներին, հանգանակություններ հավաքում, նյութապես օգնում Արևելյան Հայաստան անցած արևմտահայ գաղթականությանը: Միևնույն ժամանակ նա պայքարում է հայ եկեղեցապատկան ունեցվածքը բռնագրավելու մասին 1903-ի հունիսի 12-ի ցարական օրենքի դեմ՝ հայկական եկեղեցական թեմերին արգելելով ենթարկվել այդ որոշմանը:

Խրիմյան Հայրիկը վախճանվեց 1907 թ. հոկտեմբերի 29-ին՝ երկուշաբթի առավոտյան՝ ժամը 9-ին՝ ապրելով 87 տարի, 6 ամիս և 25 օր: Հուղարկավորվեց Էջմիածնի Կաթողիկեի հովանու տակ՝ Մայր Տաճարի Զանգակատան հարավային կողմում՝ Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու շիրիմին առընթեր:

1910 թ. հունիսի 6-ին տեղի է ունենում Խրիմյան Հայրիկի՝ երկու մետր բարձրությամբ կապույտ գրանիտե պատվանդանի վրա հաստատված սպիտակ մարմարյա տապանաքարի բացումը. տապանաքարը Էջմիածնի Սինոդի հանձնարարությամբ Հայ եկեղեցու Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպ. Սաթունյանը պատրաստել էր տվել Թիֆլիսում: Մարմարե շիրմաքարի չորս կողմերում շրջանաձև քանդակված են նուրբ և գեղեցիկ ծաղիկներ: Գլխավերևում հայրապետական թագն է և զույգ գավազաններն ու զարդերը՝ բարձրաքանդակ

[8] *Վեհափառ Հայրապետի խոսքը՝ արտասանված Խրիմյան Հայրիկի աղբյուր-հուշարձանի բացման առիթով (12 հոկտեմբերի 1982).– “Էջմիածին”, 1982, Ժ, էջ 10–11:*

[9] *Խմբագրական. Վասպուրականի արծիվը, էջ 5:*

և ուռուցիկ: Բարձրաքանդակ և ընտիր տառերով փորագրված է տապանագիրը. “ՆՈՒԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՅ…”, որը գրել էր Իզմիրլեան Կաթողիկոսը[10]. չէ՞ որ Խրիմյան Հայրիկը “հանդիսացավ դառն երգիչը հայ խոնարհ ժողովուրդի ցավերուն”[11]: Իսկ 1982 թ. հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ Խրիմյան Հայրիկի հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանի բացումը, որի վրա գրված է. “Հա՛յ մարդ, հիշի՛ր դու միշտ երկաթե շերեփը Հայրիկի”:

** * **

Արշակ Չոպանյանը “Ժամանակակից Հայաստանի առաքեալը. Ն. Վ. Մկրտիչ Խրիմեան” վերտառությամբ հոդվածում, որի ֆրանսերեն բնագիրը լույս էր տեսել “Mercure de France”*-ի 1906 թ. նոյեմբերի 15-ի համարում, իրավացիորեն նկատել է. “Խրիմեանի կեանքն ու տիպարը ստուար հատորի մը նիւթ կրնան կազմել, և այդ հատորը օր մը պիտի գրուի անշուշտ և պիտի ամփոփէ ամենայն մանրամասնութեամբ՝ այդ եզական դէմքին բոլոր գծերը…”[12]:*

Ու թեև անցած տասնամյակների ընթացքում բազմիցս անդրադարձ է արվել Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանի (1820–1907) կյանքին ու գործունեությանը, նրա մասին գրվել են բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ, սակայն մինչ օրս առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել նրա դերը հայ երաժշտության մեջ[13]:

Նկատենք, որ Մ. Խրիմյանը սիրել է երգել: Ավ. Իսահակյանի “Թույլ տվեք, վեհափառ Հայրիկ, հարցնել, թե ինչ երգեր կերգեք” հարցին ի պատասխան նա ասել է. “Շարականներ կերգեմ, ներբողներ, սուրբ հարց երգերեն՝ Շնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղափանցու, Գրիգորիս Աղթամարցու, և Բաղդասար դպիրի սիրո տաղերն ալ կերգեմ: Ղափանցին լավ տաղասաց է, Քուչակ Նահապետ անորից վեր է, բայց ժողովրդի երգեր ամենից վեր են. ես շատ կերգեմ մեր Վանա և Մուշի գեղջկական երգեր, որ սովորել եմ վաղուց Վարագա և Ս. Կարապետի ուխտավորներից: Բայց ամենից շատ կսիրեմ Խորենացու ողբը, անոր համար ես մի եղանակ եմ շինել ու

---

[10] *Տե՛ս Հ. Ա մ է մ ե ա ն. նշվ. աշխ., էջ 855:*

[11] *Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Ալեք Մանուկյանի խոսքը՝ արտասանված Խրիմյան Հայրիկի հուշարձանի բացման առթիվ (12 հոկտեմբերի 1982).– “Էջմիածին”, 1982, Ժ, էջ 25:*

[12] *Ա. Չ ո պ ա ն ե ա ն. Ժամանակակից Հայաստանի առաքեալը. Ն. Վ. Մկրտիչ Խրիմեան.– “Անահիտ” (Փարիզ), 1907, յունվար-փետրվար, թիւ 1–2, էջ 1:*

[13] *Այդ ուղղությամբ առաջին փորձը եղել է մեր “Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանը և հայ երաժշտությունը” թեմայով զեկուցումը, որով հեռակա կարգով մասնակցել ենք 2019 թ. հոկտեմբերի 8-ին Լոս Անջելեսում (ԱՄՆ) Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանի նախաձեռնությամբ գումարված “Հայոց եկեղեցւոյ 20-րդ դարի ականաւոր հոգևորականները” գիտաժողովի աշխատանքներին:*

կերգեմ: Ինձի կթվա, թե այդ ողբը Հայ Ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը, ինձի այնպես կերևա, թե Քերթողահայրն Մովսես այս օրերին համար է գրել …”[14]:

Հորինվել և հաջողությամբ կատարվել են Մ. Խրիմյանին նվիրված երգեր ու խմբերգեր: Դրանց շարքում աչքի է ընկնում հատկապես նրան նվիրված երգերից ամենամեծ ժողովրդականության վայելած “Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք” խմբերգը, որի տեքստի հեղինակն է վանեցի Մեսրոպ Ջանիկյանը և որն առաջին անգամ հրատարակվել է Կոմիտասի “Երկերի ժողովածու”-ի 4-րդ հատորում[15]:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆԻ
ԴԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ

Անուրանալի է այն բախտորոշ նշանակությունը, որն ունեցավ Մ. Խրիմյանը Կոմիտասի *՝ որպես անհատի և երաժշտի կայացման ու ձևավորման գործում: 1892-ի մայիսի 5-ին կաթողիկոսական ընտրության օրը Սողոմոն Սողոմոնյանը, վանքի պատերի ներսում իմանալով քվեարկության արդյունքները, մի թերթիկի վրա գրում է՝ “Էջմիածնում յոթանասուներկու տարեկան հասակում, յոթանասուներկու քվեով կաթողիկոս ընտրվեցավ Խրիմյան Հայրիկը”[16], ծալում է թուղթն ու պատուհանից դուրս նետում՝ մեծ իրարանցում առաջացնելով հակախրիմյանականների շրջանում: Խրիմյանի ընտրությամբ “Ժողովրդի սիրտն էր բազմում Հայրապետական գահի վրա”[17]:*

Խորհրդանշական էր, որ Խրիմյանը կաթողիկոս օծվեց հենց Կոմիտասի ծննդյան օրը՝ 1893 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնի օրը, Էջմիածնի Մայր տաճարում. “Օրը մռայլ էր և ամպամած: Օծման արարողության ժամանակ փայլատակեց արևը: Հանդիսութ-յանը մասնակցող ժողովուրդը ցնծագին աղաղակներով թնդացրեց օդը՝ երևույթը համարելով երկնային նախանշան”[18]:

Նորընտիր կաթողիկոսի օծման արարողության ընթացքում Ղ. Աղայանի “Առ Հայրիկն Խրիմյան” բանաստեղծության հիման վրա Քրիստափոր Կարա-Մուրզայի ղեկավարած երգչախումբը կատարել է նրա հորինած “Մաղթանք Խրիմյան Հայոց Հայրիկին” վերնագրով օրհներգը: Այնուհետև վանքի սեղանատանը տրվել է հանդիսավոր ճաշկերույթ, որի ընթացքում “ստեպ առ ստեպ երգում է Ճեմարանի երգչախումբը՝ Սողոմոն ավագ սարկավագ

---

[14] *Ավ. Իսահակյան. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1977, էջ 19: Տե՛ս նաև նույնի. Խրիմյան Հայրիկը.– “Էջմիածին”, 1957, ԺԱ, էջ 42–43:*

[15] *Տե՛ս Կոմիտաս. Երկերի ժողովածու, հ. 4. Խմբերգեր և մեներգեր, Երևան, 1976, էջ 51–52, 174–175:*

[16] *Կոմիտաս (կազմ.՝ Ղ. Միրզոյան, Ա. Մխիթարյան), Երևան, 2015, էջ 202:*

[17] *Տե՛ս Խմբագրական. Վասպուրականի արծիվը, էջ 6:*

[18] *Է. Կոստանդյան. Մկրտիչ Խրիմյան (մահվան 90-ամյա տարելիցի առթիվ).– ՀՀ ԳԱԱ “Լրաբեր հասարակական գիտությունների”, 1997, № 3, էջ 43:*

Սողոմոնյանի մասնակցությամբ”[19]:

Այդ օրվանից մինչև Նորին Վեհափառության կենաց վախճանը Կոմիտասը վայելեց նրա հոգատար վերաբերմունքն իր անձի ու կատարած գործի հանդեպ: Ասում են, թե իր կաթողիկոսության առաջին իսկ օրերին Խրիմյանը Կոմիտասին էր նվիրել Խաչատուր Աբովյանի լուսանկարը, որը նա պահել-պահպանել է մի առանձին խնամքով: “Այս Խաչատուր Աբովյանի լուսանկարը,– խոստովանել է Կոմիտասը,– իմ ամենասիրած իրս է, իմ էության հետ մաս կազմող… Մոտ կամ հեռու՝ ուր որ ճամփորդեմ՝ հետս կտանիմ զայն: Այս թանկագին նվեր-հիշատակը ինձ տվավ Խրիմյան Հայրիկը՝ իր կաթողիկոսության առաջին օրերուն”[20]:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի պաշտոնավարման տարիներին Էջմիածնի հոգևոր ճեմարանում մեծ ուշադրություն դարձվեց երաժշտության դասավանդման գործին: 1893 թ. մայիսի վերջին Սողոմոնն ավարտել էր ճեմարանի լսարանական բաժնի եռամյա դասընթացը՝ ներկայացնելով “Շնորհալին. նորա դարը և նորա ժամանակ յուզուած կրօնական խնդիրները”[21] վերնագրով ավարտական շարադրությունը, և հոկտեմբերի 5-ին Նորին Վեհափառության հրամանով նշանակվեց ճեմարանի երաժշտության ուսուցիչ՝ այդ պաշտոնում փոխարինելով Ք. Կարա-Մուրզային: Երաժշտության նորանշանակ ուսուցիչն անմիջապես գործածության մեջ դրեց եվրոպական ձայնագրությունը, քանի որ առանց դրա իմացության անհնար էր հաղորդակցվել համաշխարհային երաժշտությանը[22]:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի հրամանով Կոմիտասը ստանձնեց նաև Էջմիածնի Մայր Տաճարի խմբավարի պաշտոնը: 1893 թ. նոյեմբերի 21-ին Մայր Տաճարում Սողոմոնի ղեկավարած քառաձայն երգչախումբն առաջին անգամ կատարեց “Հայր մեր”-ը: “Տպավորությունը հսկայական էր,– գրում է ունկնդիր Աշոտ Աթանասյանը,– եթե դա աղոթք չլիներ, այլ կոնցերտ, անշուշտ դրան կհետևեին բուռն ծափահարություններ”[23]:

Նկատենք նաև, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը Խրիմյանին հայոց պատրիարք էր հաստատել 1869 թ. սեպտեմբերի 4-ին՝ Կոմիտասի ծննդյան օրից ընդամենը 24 օր առաջ[24]: Եվ, ահավասիկ, Էջմիածնում 1894 թ. սեպտեմբերի 11-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի բանավոր հրամանի հիման վրա Մեսրոպ արքեպ. Սմբատյանը Գայանե վանքում, Նորին Վեհափառության ներկայությամբ, ի թիվս հոգևոր ճեմարանի շրջանավարտ վեց սարկավագների, կուսակրոն

---

[19] *Տե՛ս Խ. Սամվելյան. Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունից.– “Էջմիածին”, 2007, ԺԱ, էջ 129:*

[20] *Ադ. Մեսրոպյան. Հուշեր.–Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2009, էջ 330:*

[21] *Կոմիտաս վարդապետ. Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Երկու գրքով, Գիրք Ա, Աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի եւ Մարինէ Մուշեղեանի, Երեւան, 2005, էջ 15–54:*

[22] *Այդուամենայնիվ՝ Կոմիտասն իր ողջ կյանքում օգտվեց հենց նոր հայկական ձայնագրությունից:*

[23] *Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1967, էջ 336:*

[24] *Տե՛ս Է. Կոստանդյան. նշվ. հոդվ., էջ 39:*

աբեղա է ձեռնադրում նաև Սողոմոն սարկավագ Սողոմոնյանին: "Նորին Վեհափառութիւնը բարեհաճել էր ուշադրութիւն դարձնել նոյն իսկ նոցա անունների վրայ"[25], և նրա հաճությամբ քեռթահիացի Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը, ձեռնադրվելով աբեղա, ստանում է Կոմիտաս *անունը՝ ի պատիվ Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի, ով նաև բանաստեղծ-երաժիշտ էր, հայ շարականերգության նշանավոր ներկայացուցիչներից մեկը, "Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի" շարականի հեղինակը[26]:*

Իր այս ընտրությամբ Վեհափառը, մեր համոզմամբ, ոչ միայն ընդգծել է երիտասարդ հոգևորականի գործունեության՝ շեշտված երաժշտական հետագա ուղղվածությունը, այլև հանձին նրա, գուցե և, տեսել Հայ եկեղեցու ապագա Հայրապետի: Եթե Կոմիտասը չհեռանար Էջմիածնից և չբավարարվեր վարդապետի աստիճանով, ապա, թերևս, ինքն էլ դառնար կաթողիկոս: Մանավանդ, որ նման օրինակ ունենք: Հայտնի է, որ հայ արվեստաբանության մեջ լրջագույն ներդրում ունեցող նշանավոր հայագետ ու արվեստաբան Գարեգին Հովսեփյանը, ով հավաքել, կազմել է մինչև 1250-ը գրված ձեռագրերի 459 հիշատակարան, 1951 թ. հրատարակել է "Հիշատակարանք ձեռագրաց" բացառիկ նշանակություն ունեցող հատորը, հեղինակել "Մանրանկարչության արվեստը հայոց մեջ" (1902), "Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության" քառահատորը (1935–1951), "Հեթում Ա-ի նկարազարդ Ավետարանի մնացորդները" ու այլ աշխատություններ, զբաղվել կերպարվեստի պատմությամբ, մանրարվեստով, 1943 թ. ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մեծ աջակցություն ցուցաբերելով "Սասունցի Դավիթ" տանկային շարասյան ստեղծմանը, նաև 1946 թ. հայրենադարձության կազմակերպմանը[27]:

1895-ի փետրվարի 26-ին Նորին Վեհափառության հրամանով Մ. արքեպ. Սմբատյանը Ս. Աստվածածին եկեղեցում Կոմիտասին և ուրիշ չորս աբեղաների շնորհում է վարդապետական աստիճան ու գավազան: Հենց Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ երիտասարդն ընտրեց երաժշտական կրթությունը …

… Ինչպես հետագայում խոստովանել է Կոմիտասը. "Եթե բախտը ինձ չժպտար, և ես Ս. Էջմիածին և ապա իմ անգին բարերար պ. Աղեքսանդր Մանթաշյանի միջոցով Գերմանիա չգնայի, կլինեի իմ հայրենիքում՝ Կուտինայում, շատ-շատ մի կոշկակար, որովհետև որբիս խնամող Հարություն հորեղբայրս էլ կոշկակար էր"[28]: Մեզ մնում է ավելացնել, որ հայտնի նավթարդյունաբերող և բարերար Ալ. Մանթաշյանը, ով արտասահմանում սովորելու համար տաղանդավոր հայ ուսանողներին կրթաթոշակ էր տրամադրում, Կոմիտասի ուսումը Գերմանիայում ֆինանսավորեց հենց Նորին Վեհափառության հորդորով: "Արարատ" հանդեսի հաղորդմամբ. "Ճեմարան աւարտած սաներից արժ. Կոմիտաս վարդապետը, որ

[25] *"Արարատ", 1894, թիւ Թ, էջ 290:*

[26] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 541:*

[27] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 580:*

[28] *Խ. Սամվելյան. Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունից.– "Էջմիածին", 2007, Ե, էջ 94–95, "Ժամանակ" (Կ. Պոլիս), 25. IX. 1910:*

երգեցողութեան ուսուցիչ էր ճեմարանում անցեալ տարի և այս տարի Թիֆլիզում պ. Եկմալեանին էր աշակերտում, իրաւունք ստացաւ Նորին Վեհափառութիւնից արտասահման գնալու և երաժշտական արուեստում կատարելագործուելու: Հայր Կոմիտաս վարդապետի ուսման ծախքն հոգալ խոստացել է յայտնի բարեգործ պ. Աղէքսանդր Մանթաշեանը, որին այդ առթիւ ազգիս Վեհափառ Կաթուղիկոսն իւր առաքելական օրհնութիւնն հաճեցաւ տալ յատուկ կոնդակով"[29]:

Պահպանվել են Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանին հասցեագրված Կոմիտասի երկու նամակները: Դրանցից առաջինը, որը Կոմիտասը գրել է 1895 թ. հուլիսի 25-ին, ներկայացնում է հայ ժողովրդական երգերի ու պարերգերի գրառման ուղղությամբ անցած յոթ տարիների ընթացքում իր կատարած աշխատանքը: Հայտնի է, որ 1884 թ. Բուն Բարեկենդանի տոներին ճեմարանի երկրորդ դասարանի աշակերտ Սողոմոնը հյուրընկալվում է իր դասընկերներից մեկի տանը՝ Երևանի նահանգի Էջմիածնի գավառի Քյորփալու (այժմ՝ Արշալույս) գյուղում. "Այստեղ "շինականի ախոռում առաջին անգամ լսում է ժողովրդական երգը", որը նրա համար մի հայտնություն է լինում: Անմիջապես ձայնագրում է լսած երգը և խնդրում է՝ ուրիշներն էլ երգեն, և դարձյալ ձայնագրում է"[30]: Մեկ տարի անց՝ 1885-ին, Սողոմոնը ծանոթանում է Գևորգյան ճեմարանի լսարանականի շրջանավարտ Մանուկ Աբեղյանի հետ: Վերջինս գրում է. "Այդ ժամանակ նա սկսել էր գրավվել հայ ժողովրդական երգերի եղանակներով, հեշտությամբ սովորել էր այդ եղանակները և երգում էր, ես էլ իմ կողմից հետաքրքրվում էի ժողովրդական երգերով և ընդհանրապես ժողովրդական բանա-հյուսությամբ: Այս հանգամանքը ահա առիթ եղավ մեզ ընկերանալու"[31]: Մոտ մեկ տարի անց՝ 1886-ին, Մ. Աբեղյանի խոսքերով Սողոմոնը կգրի իր "Սիփանա քաջեր" խմբերգը, որով միշտ եզրափակում էր իր կազմած խմբական երգեցողությունները:

Եվ այսպես՝ իր նամակում Կոմիտասը, արժևորելով և կարևորելով իր գրառած հայ ժողովրդական երգերն ու պարերգերը, խնդրում է Վեհափառին միջոցներ հատկացնել և աջակցել՝ փրկելու այն գանձերը, որոնք թաղված են մնացել անհայտության մեջ: Վերջում Կոմիտասը խնդրում է թույլատրել տպագրել դրանք: Նպատակահարմար ենք համարում նամակը մեջբերել ամբողջությամբ.

"Վեհափառ Հօրն

Տ. Տ. Մկրտչի Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Քահանայապետ սուրբ,

Եօթն ամս անցուցեալ է իմ ի վերայ, յորմէ հետէ ժողովեմ զՀայոց ժողովրդական երգս և զպարերգս, զորոց տակաւին կարի սակաւ ինչ է յայտ զեղանակացն, զկազմութեանցն և զկնի:

---

[29] *"Արարատ", 1896, թիւ Դ, էջ 189:*

[30] *Խ. Սամվելյան. Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունից.– "Էջմիածին", 2007, Ե, էջ 101:*

[31] *Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 431:*

Ժողովրդական եղանակքն Հայոց ի պարզութիւն և ի վեհութիւն իւրեանց զնմանութիւն բերեն զնուագաց շարականաց նախնեաց մերոց սրբոց, յորս արտայայտին կեանք և միտք Հայկեան սեռիս. և սոքա ցարդ կան թաղեալ ի թագստի և ի կողմն յուշից և յուրուշից յիմաստնոց՝ ի փիլիսոփայից. և արդ ևեթ պահեալ կան ի գեղջկական հանճարի նախնեաց թարմ և անխառն զգացմանց երաժշտութիւն, որ և խուն առ խուն ի կորուստ դիմեալ յառաջէ յերևումն օտար եղանակաց: Եթէ ո՛չ տարածեսցէ զձեռն, ի բարձր բազուկ, յօձուն լինիլ, հօտապետդ քարշել, հանել ի կորստենէն իսպառսպուռ յանյայտութիւն և ի մոռացօնս դատապարտեսցին:

Բաց յայդմանէ, ի ժողովրդական եղանակսն Հայոց իբրև զծիր իմն կարմիր նկատեն առընչութիւնք սոցա եղանակաց շարականաց: Ի մէն միում յերգսն գեղջկայինսն որպէս զշող ցոլայ բնատուր հանճար Հայաստան ազին, որ և կարօտի բազմապիսի ուսումնասիրութեանց:

Ուստի համարձակիմ խնդրել ի համբոյր Ս. Աջոյդ Հայրապետիդ, թոյլատրել, ի բան բարձր հրամանի Ձերոյ, ի տպագրել զանգին գանձսն, զորս աւանդեալ է մեզ բազմահարուստ հանճարոյ նախնեաց մերոց սրբացելոց:

Քահանայապետիդ

Ամենախոնարհ ծառայ և որդի

Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան

1895 ամի ի 25-ն հուլիսի ի Ս. Էջմիածին”[32]:

Փաստորեն, այս նամակում արդեն շեշտվում են Կոմիտասի երաժշտական ֆոլկլորագիտական հետագա գործունեության կարևոր ուղղություններից երկուսը՝ հայ ժողովրդական երգերի գրառումը և դրանց հրատարակումը: Մյուս կողմից, ահավասիկ, այս նամակում արդեն Կոմիտասը գիտական շրջանառության մեջ է դնում այն միտքը, որ հայ ժողովրդական երգերն իրենց կազմությամբ մոտ են շարականներին, գաղափար, որը հետագայում պիտի բյուրեղանար և դառնար կոմիտասյան հայտնագործությունը՝ հայ ժողովրդական ու հոգևոր եղանակները քույր և եղբայր են, հայ ժողովրդական ու հոգևոր երաժշտության լադերի հիմքում ընկած են շղթայված տետրախորդները, և դրանով իսկ դրանք տարբերվում են եվրոպական մաժորից ու մինորից:

Վեհափառին հասցեագրված երկրորդ նամակում, որը գրել է Բեռլինից 1898 թ. նոյեմբերի 19-ի[33], Կոմիտասն իր անհանգստությունն է հայտնում երկու հայ որբ պատանիների վիճակի կապակցությամբ, որոնց ծնողները զոհվել էին 1896 թ. հայկական ջարդերի ժամանակ: Գերմանահայկական ընկերության միջոցով այդ որբերը փոխադրվել էին Բեռլին և ընդունվել Վիլհելմսդորֆի ինստիտուտ: Նրանց ծանր վիճակով մտահոգ Կոմիտասը դիմում է

---

[32] *Գ. Հարությունյան. Կոմիտասի կյանքն ու գործունեությունը նորահայտ վավերագրերի լույսի տակ.– “Բանբեր Հայաստանի արխիվների”, 1966, № 2, էջ 156–157:*

[33] *Ի դեպ, այս նամակի վերաբերյալ իր հաղորդման մեջ Գ. Հարությունյանը նշում է նոյեմբերի 7-ի ամսաթիվը (տե՛ս Գ. Հարությունյան. նշվ. հոդվ., էջ 159), մինչդեռ Կոմիտասի “Նամականի”-ում նոյեմբերի 19-ի ամսաթիվն է (տե՛ս Կոմիտաս. Նամակներ, Երևան, 2000, էջ 75, նաև Կոմիտաս. Նամականի, Երևան, 2009, էջ 54):*

կաթողիկոսին և խնդրում օժանդակել, որպեսզի այդ պատանիները հնարավորություն ստանան ավարտել ուսումը[34]:

Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երկարամյա տեսուչ, հայագետ, բանասեր և մանկավարժ Կարապետ Կոստանյանին Թիֆլիսից 1895 թ. հոկտեմբերի 30-ին ուղղված Կոմիտասի նամակից տեղեկանում ենք, որ նա ևս մեկ նամակ է գրել Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանին[35], որը, սակայն, մինչ օրս չի գտնվել[36]:

Կոմիտասը ջերմ հարաբերություններ է ունեցել նաև Մ. Խրիմյանի ընտանիքի անդամների հետ. վերջինիս կարգադրությամբ՝ Կոմիտաս աբեղան 1893 թ. երաժշտության և երգեցողության դասեր է տվել Խրիմյան Հայրիկի եղբոր երկու թոռնուհիներին: Հետագայում նրանցից Կարինե Խրիմյանը կհիշի. "Հաճախ, մեծ տոներու, պոլսաբնակ մեր հարազատները տուփերով ընտիր շաքարեղեններ կուղարկեին Խրիմյան Հայրիկին: Այդպիսի օրեր Հայրիկը գիտնալով Կոմիտասին քաղցրասիրությունը, մեզ հետ քանի մը տուփ նվեր կուղարկեր Կոմի-տասին, և մենք շատ աղեկ գիտեինք և կտեսնեինք, որ այդ շաքարները Կոմիտաս գրպանները լեցուցած կբաժներ իր ճամփաները կտրող երեխաներուն:

Շատ հաճախ ալ ծնողքս, ի նշան երախտագիտության, երբ հարգի նվեր մը կուտային իրեն, Կոմիտաս կմերժեր զայն, ըսելով. "Վայելած ծնողական գուրգուրանքներս ալ բավական են, որ մինչև կյանքիս վերջ երախտագետ ըլլամ Խրիմյան հարազատներուս"[37]:

Կ. Խրիմյանի հուշագրության մեջ նկարագրված է, թե ինչպես է Հայրիկը Բյուրականի իր ամառանոցում դիմավորել 1899 թ. Գերմանիայից վերադարձող Կոմիտասին: "Առտու մը, երբ, ըստ սովորության, Հայրիկը ծառի մը տակ նստած սուրճ կխմեր, հանկարծ իր հզոր ձայնով իր մոտ կանչեց մեզ և այլայլված ըսավ. "Աղջկերք, կես ժամե ի վեր ականջիս երգ ու երաժշտության ձայներ մը կուգան, սա ցնո՞ր է, թե իրականություն": Եվ իրոք՝ հետզհետե մեր ականջներուն ալ պայծառացան երգ ու երաժշտության ելևէջները …

Հայրիկի առաջարկին վրա, մայրս և երկու քույրերս վազեցինք ձայների ուղղությամբ՝ բլուրի մը գագաթը, և ի՜նչ տեսնենք– մոտակա դաշտի մը արահետեն դեպի գյուղ եկող սայլի մը վրան՝ մեր Խորեն հայրիկը (Խրիմյան Հայրիկի եղբոր որդին.– Ա. Ա.*) և մեր տան հարազատ բարեկամ նկարիչներ Փանոս Թերլեմեզյանն ու Եղիշե Թադևոսյանը, որոնք կանգնած շրջապատեր էին տարիներե ի վեր սպասված Բեռլինեն գալիք մեր դաշնամուրը: Անոր առջև նստած Կոմիտաս կերգեր ու կնվագեր Հայրիկի սիրած ուրախ երգերեն"[38]: Երբ սայլը տեղ հասավ, Վեհափառի ամառանոցում հավաքվել էին բազմաթիվ բյուրականցիներ: "Այնտեղ մեծ ուրախություն եղավ: Հայրիկը ողջագուրեց իր կարոտալի սանը և հուզված շեշտով մը ըսավ. "Դզուր չէ, որ Հայրիկի բացառիկ սիրույն ու գուրգուրանքին արժանացած ես, տարիներ առաջ տված խոստումդ*

---

[34] *Տե՛ս Կ ո մ ի տ ա ս. Նամականի, էջ 54:*

[35] *Տե՛ս նույն տեղում, էջ 29:*

[36] *Տե՛ս նույն տեղում, էջ 302:*

[37] *Ա ղ. Մ ե ս ր ո պ յ ա ն. նշվ. աշխ., էջ 361–362:*

[38] *Նույն տեղում, էջ 362:*

այսօր արդեն կատարեցիր… Թեև ուշ՝ բայց նուշ եղավ … Խոստանալ և կատարել շատ հաճախ իր անասելի դժվարությունները ունի և ես գիտեմ, որ դուն այդ դժվարություններուդ լեղի պատառները ի սեր Հայրիկին մարսեցիր … Խոստանալ և կատարելը առաքինությանց բանալին է …": Եվ Հայրիկը կրկին ու կրկին անգամ ողջագուրեց իր "բլբուլ" սանը և օրհնեց զայն"[39]:

Վեհափառի մահից հետո, որը տեղի ունեցավ 1907 թ. հոկտեմբերի 29-ին, Կոմիտասը որբացավ երրորդ անգամ: Նոյեմբերի 4-ին տեղի ունեցած պատարագին "Հ. Կոմիտաս վարդապետի նոր պատրաստած խումբը իւր ներդաշնակ երգեցողութեամբ օրուայ տխուր հանդիսաւորութիւնը աւելի վսեմ էր դարձնում և սրբազան"[40]:

Մ. Խրիմյանի մահից հետո հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ կարճ ժամանակ անց Կոմիտասը ստիպված էր հեռանալ Էջմիածնից: Բանն այն է, որ կաթողիկոսական ընտրություններում Կոմիտասը պաշտպանեց Կ. Պոլսո պատրիարք, ազգային և եկեղեցական մեծ գործիչ Մաղաքիա Օրմանյանի թեկնածությունը, քանի որ գտնում էր՝ նա "… շատ խելօք, դիւանագէտ, զգոյշ, շրջահայեաց, քաղաքավար, միևնոյն ժամանակ հայրենասէր, յառաջադիմական, բարձր ուսումով, աստուածաբան, պատմագէտ, ջերմեռանդ հաւատացեալ, մի խօսքով՝ կատարեալ և յարմար եկեղեցու պետ, ժողովրդի հայր…"[41] էր: Բայց… 1908 թ. կաթողիկոս ընտրվեց Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյանը: Եվ Կոմիտասը դարձավ ծայրաստիճան հուսախաբ, դյուրագրգիռ, դժգոհ, բարկացկոտ և "իր սիրելի ժպիտը և զուարթութիւնը կորսնցուց: Ընտրութենէն ետքն ալ կը շարունակէր Օրմանեանի գովքը և կը նշէր ընտրողներու կարճամտութիւնը: Հայր Սուրբն այլևս տխուր էր, փոխուած, յուսախաբ"[42]:

Կոմիտասի շնորհիվ պահպանվել է Խրիմյան Հայրիկին խիստ բնորոշ դրվագներից մեկը, որով հանրագիտակ, հայագետ, հրապարակագիր և գրող Մկրտիչ Պոտուրյանը եզրափակել է "Բազմավեպ"-ի երեք՝ 1907 թ. 12-րդ, 1908 թ. 2-րդ և 4-րդ համարներում շարունակաբար տպագրված, Խրիմյան Հայրիկին նվիրված ծավալուն հոդվածը: Ահա այն.

"Գերմանացի հնախոյզ մը Էջմիածին կ'այցելէ. յետոյ Վեհափառ Խրիմեանի կ'ուզէ ներկայանալ:

Ո՞վ է այս պարոնը, կը հարցնէ Խրիմեան:

Գերմանացի հնախոյզ մը:

Հա՛, ըսէք իրեն որ ես թանկագին հնութիւն մը ունիմ. հարցուցէ՛ք քանի տարուան հնութիւն կը կարծէ:

Հինգերորդ դարու, կը պատասխանէ օտարականը թարգմանին բերնով:

---

[39] *Նույն տեղում, էջ 363:*

[40] *Հանգիստ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, էջ ԺԲ:*

[41] *Մ. Մ ա ր ա ն ջ ե ա ն. Կոմիտաս Վարդապետ.– Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, էջ 68:*

[42] *Նույն տեղում:*

Անկե՛ց ալ հին:
Քրիստոսի ժամանակէն:
Անկեց ալ հին:
Ու հնախոյզը հետաքրքրուած այս հնութենէն կ'ըսէ:
Տեսնեմ վեհափառ տէր, ի՞նչ է այդ թանկագին հնութիւնը:
Իմ Ազգս է, Քրիստոսէ ալ հին, Մովսէսէ՛ն ալ հին. իմ թշուառ ա՛զգը, որ անտեսած այս թանկագին հնութիւնը՝ հին քար մը կամ առարկայ մը փնտռելու կ'ելլէք"[43]:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆԸ
ԵՎ ԲԱԶՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ինչպես հայտնի է, Կարա-Մուրզան տարիներ շարունակ պայքարում էր, որպեսզի բազմաձայնությունը մուտք գործի հայ եկեղեցի: Ու թեև նա արդեն ստեղծել էր Պատարագի բազմաձայն մշակումը, սակայն այն եկեղեցում կատարելու թույլտվություն չէր ստանում[44]: Հոգևորականները նրան առարկում էին՝ պատճառաբանելով, թե "Աստված մեկ է, երգեցողությունն էլ պետք է միաձայն լինի" և այլն:

Մակար Եկմալյանի "Պատարագի" լույս տեսնելուց հետո Կարա-Մուրզան հրաժարվում է իր բազմաձայնած Պատարագից և ձեռնամուխ լինում Եկմալյանի Պատարագի կատարմանը, որը շրջանառության մեջ մտավ շնորհիվ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի:

1895 թ. հունիսի 7-ի Հայրապետական կոնդակով կաթողիկոսը թույլատրեց Մ. Եկմալյանի "Պատարագի" տպագրությունը և կատարումը բոլոր հայկական եկեղեցիներում. "Ուստի այսու կոնդակով թոյլ տամք քեզ պսակել զաշխատութիւն քո առ ի կիր արկանել յեկեղեցիս մեր, եւ միանգամայն յորդոր կարդամք առ ձեռնահաս եւ ջերմեռանդ ազգայինս, զի բարերար ձեռնտուութեամբ օժանդակ լինիցին քեզ, որով կարող լինիցիս զերկասիրութիւնդ ի լոյս ածել յօգուտ եւ ի պայծառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ"[45]:

Ավելին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի՝ 1898 թ. դեկտեմբերի 14-ի "Մակար Եկմալյանի պատարագի երգեցողությունը սովորելու համար թեմերից ներկայացուցիչների ուղարկելու մասին" կոնդակով "հանձնարարվում էր եկեղեցական թեմերին՝ տեղերում կարող ուժեր ընտրել և Թիֆլիս ուղարկել Եկմալյանին աշակերտելու, նրա ձեռքի տակ խմբավարական արվեստում վարժվելու, Ս. Պատարագի կանոնավոր երգեցողության կատարման մեջ հմտանալու նպատակով"[46]:

---

[43] *Հ. Մ. Պ ո տ ո ւ ր ե ա ն. Խրիմեան Հայրիկ.– "Բազմավէպ" (Վենետիկ), 1908, - 4, էջ 191:*

[44] *Տե՛ս Կ. Խ ո ւ դ ա բ ա շ յ ա ն. Քրիստափոր Կարա-Մուրզա (1853–1902).– Նշանավոր ճեմարանականներ, պր. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 304–305:*

[45] *Մակար Եկմալյան (վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ), Երևան, 2006, էջ 18:*

[46] *Տե՛ս նույն տեղում, էջ 72:*

Կարա-Մուրզան առաջիններից էր, ով ծանոթանալով Եկմալյանի Պատարագի պարտիտուրին՝ "իր հրճվալից շնորհավորանքն ուղղեց իր գործընկերոջը, նշելով Պատարագի գեղարվեստական բացառիկ արժանիքները"[47]: "Մշակ" թերթում նա գրում է. "Մանրամասն խոսելը թողնելով մի այլ ժամանակի, այնքանը կասեմ, որ Մ. Եկմալյանի այդ "Երգեցողութիւնքը" թե հիանալի և թե զարմանալի գրվածք է: Հայների միության մեջ հիանալի ներդաշնակություն է լսվում ամեն տեղ, և զարմանալի գեղարվեստական հմտությամբ է գրված ամեն բան: Միևնույն ժամանակ պահված է եղանակների ճշտությունը: Ինչպես երևում է՝ պ. Եկմալյանն օժտված է բացի գիտությունից և մի առանձին տոկունությամբ, առանց որի, կարելի է ասել, անհնարին է այդպիսի մի մեծ աշխատություն լույս ընծայել այդքան ճշտությամբ: Սա կարելի է համարել պ. Եկմալյանի գլուխգործոցը, որով նա լրացրեց եկեղեցական երաժշտության այն պակասությունը, որ գնալով ավելի ու ավելի զգալի էր դառնում մեզանում: Ցանկալի կլիներ, որ ինչքան կարելի է աշխատեին ամեն տեղ "Պատարագի երգեցողությունքը" գործադրել: Այստեղի խումբը վերջացրեց իր պարապմունքը և արդեն երգում է եկեղեցում՝ Ստ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ"[48]:

Մ. Եկմալյանին հասցեագրված նամակում Կարա-Մուրզան Պատարագի մասին գրում է. "Դուք պէտք է պարծենաք, դա Ձեր գլուխգործոցն է, դրանով Դուք Ձեր հեղինակութիւնը անմահացրիք և որ գլխաւորն է՝ ազգին մատուցիք այն մեծ ծառայութիւնը, որոյ ծարաւը գնալով ամեն րոպէ զգալի և զգալի էր լինում: Պէտք է աշխատել և ամեն ջանք գործ դնել, որ ինչքան կարելի է շուտ ու շատ տարածի այդ Պատարագը ամեն տեղ"[49]:

Իսկ Կոմիտասը Եկմալյանի "Պատարագ"-ի մասին գրեց. "Յարգելի երաժիշտ Պ. Մակար Եկմալեանը մեր երգեցողութեան ամայի անդաստանի մէջ ներդաշնակութեան անդրանիկ բուրաստանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ Հայերս այժմ կարող ենք պարծել, թէ մենք էլ յետ չենք մնացել վսեմ գեղարուեստի ու կատարելագոյն երաժշտութեան զարգացումից"[50]:

Տեղեկություններ կան, որ 1898 թ. նոյեմբերի 1-ին Պատարագը Կարա-Մուրզայի նախաձեռնությամբ հնչել է Թեոդոսիայի Սուրբ Սարգիս եկեղեցում, և որ Պատարագը հետաքրքրությամբ է ունկնդրել ու նրա հաջողությամբ ուրախացել Հովհաննես Այվազովսկին[51]:

Այսպիսով՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Խրիմյանն իր կաթողիկոսության շրջանում՝ 1892–1907 թվականներին, մեծ դեր ունեցավ հայ երաժշտության առաջընթացի գործում.

1. Կոմիտասի՝ որպես անհատի ու երաժշտի կայացման և ձևավորման հարցում անուրանալի

---

[47] *Նույն տեղում, էջ 223:*

[48] *Նույն տեղում, էջ 28–29:*

[49] *"Հորիզոն" (Թիֆլիս), 09. VII. 1911:*

[50] *Կ ո մ ի տ ա ս Վ ա ր դ ա պ ե տ. Երգեցողութիւնք Մ. Պատարագի.– "Արարատ", 1898, թիւ Գ և Դ, էջ 117:*

[51] *Մակար Եկմալյան (վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ), էջ 223:*

է Վեհափառի բախտորոշ դերը,

2. *մեծ ուշադրություն դարձվեց Էջմիածնի հոգևոր ճեմարանում երաժշտության դասավանդման գործին. կաթողիկոսի հրամանով ճեմարանի երաժշտության ուսուցիչ նշանակված Կոմիտասն անմիջապես գործածության մեջ դրեց եվրոպական ձայնագրությունը, քանի որ առանց դրա իմացության անհնար էր հաղորդակցվել համաշխարհային երաժշտությանը,*
3. *1895 թ. հունիսի 7-ի Հայրապետական կոնդակով թույլատրվեց Մ. Եկմալյանի "Պատարագի" տպագրությունը և կատարումը հայկական բոլոր եկեղեցիներում: Դրա շնորհիվ բազմաձայնությունը մուտք գործեց հայ եկեղեցի, և նոր հորիզոններ բացվեցին հայ երաժշտության հուժկու առաջընթացի համար:*

Աննա Ասատրյան – արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունը՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 12 մենագրության և ավելի քան 160 հոդվածի: instart@sci.am

REFERENCES

Abeghyan M. Erker, h. E, Yerevan, 1975 (In Armenian).
Ajemyan H. Hayots Hayrik. "Nvagogh vshtic hayreneac Hayots": Kensagrutivn, arajin hator, Hayr Simon Eremean-Atrushani yarajabanov, Tavriz, 1929 (In Grabar).
"Ararat" (Edjmiadsin), 1894, tiv T; 1896, tiv D; 1898, tiv G ev D; 1907, tiv Zh–ZhA (In Grabar).
"Anahit" (Pariz), 1907, yunvar-petrvar, tiv 1–2 (In Grabar).
"Banber Hayastani arkhivneri", 1966, № 2 (In Armenian).
"Bazmavep" (Venetik), 1908, № 4 (In Grabar).
Chopanyan A. Erker, Yerevan, 1988 (In Armenian).
"Edjmiadsin", 1957, ZhA; 1982, Zh; 2007, E; 2007, ZhA (In Armenian).
Ghazaros Aghayane zhamanakakitsneri husherum, Yerevan,1967 (In Armenian).
Haykakan sovetakan hanragitaran, h. 5, Yerevan, 1979; h. 6, Yerevan, 1980 (In Armenian).
HH GAA "Lraber hasarakakan gitutyunneri", 1997, № 3 (In Armenian).
"Horizon" (Tiflis), 09. VII. 1911 (In Grabar).
Isahakyan Av. Erkeri zhoghovadsu 6 hatorov, h. 5, Yerevan, 1977 (In Armenian).
"Jamanak" (K. Polis), 25. IX. 1910 (In Armenian).
Khudabashyan K. Qristapor Kara-Murza (1853–1902).– Nshanavor jemaranakanner, pr. A, Mayr Ator S. Edjmiadsin, 2005 (In Armenian).
Komitas (kazm.` Gh. Mirzoyan, A. Mkhitaryan), Yerevan, 2015 (In Armenian).
Komitas. Erkeri zhoghovadsu, h. 4. Khmberger ev menerger, Yerevan, 1976 (In Armenian).
Komitase jamanakakitsneri husherum ev vkayutyunnerum, Yerevan, 2009 (In Armenian).
Komitas Vardapet. Usumnasirutivnner ev yodvadsner, Erku grqov, Girq A, Ashkhatasiruyeamb Gurgen Gaspareani ev Marine Mushegheani, Yerevan, 2005 (In Grabar).

Komitas. Namakner, Yerevan, 2000 (In Armenian).
Komitas. Namakani, Yerevan, 2009 (In Armenian).
Makar Ekmalyan (vaveragrer, namakner, husher, hodvadsner), Yerevan, 2006 (In Armenian).
“Mshak” (Tiflis), 13. XII. 1873 (In Armenian).

КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН МКРТИЧ I ВАНЕЦИ ХРИМЯН И АРМЯНСКАЯ МУЗЫКА

АННА АСАТРЯН

Резюме

Ключевые слова: Католикос Всех Армян Мкртич I Ванеци Хримян, Аршак Чопанян, Комитас, Эчмиадзинская духовная семинария, «Патараг» М. Екмаляна, Патриарший кондак, вхождение многоголосия в армянскую церковь, армянская музыка.

В течение прошедших десятилетий о жизни и деятельности Католикоса Всех Армян Мкртича I Ванеци Хримяна (1820–1907) было написано большое количество монографий и статей, однако до настоящего времени степень его участия в развитии армянской музыки не становилась предметом отдельного исследования. Между тем Католикос, этот ревностный пропагандист армянской культуры, развернувший во время своего патриаршества (1892–1907) обширную национально-просветительскую деятельность, сыграл существенную роль в развитии армянской музыки.

I. Невозможно переоценить роль Святейшего Патриарха в выявлении и дальнейшем становлении Комитаса как индивидуальности и музыканта. М. Хримян вступил на престол главы Армянской Апостольской церкви в Эчмиадзинском кафедральном соборе 26 сентября 1893 г. (по случайному совпадению – в день рождения Комитаса). С этого дня и до своей кончины Католикос с подчеркнутой душевностью относился к личности Комитаса и его деятельности. В соответствии со словесным приказом Католикоса и в его присутствии, 11 сентября 1894 г. дьякон Согомон Согомонян был рукоположен в монахи и по выбору самого Католикоса наречен Комитасом – в честь Католикоса VII века Комитаса I Ахцеци, помимо прочих талантов наделенного также талантами поэта и музыканта.

Именно с благословения М. Хримяна Комитас выбрал стезю профессионального музыканта. Впоследствии он признавался: «Если бы судьба не улыбнулась мне, и я бы не поехал в Св. Эчмиадзин, а затем, при поддержке моего бесценного благотворителя г-на Александра Манташяна, в Германию, был бы я сейчас в моей родной Кутине не иначе как сапожником, ибо сапожником был папин брат Арутюн, опекавший меня, сироту». Отметим, что Александр Манташян оплатил учебу Согомона Согомоняна в Германии по увещанию М. Хримяна.

Вскоре после кончины М. Хримяна Комитас был вынужден покинуть Эчмиадзин.

II. В период патриаршества М. Хримяна преподаванию музыки в Эчмиадзинской духовной семинарии уделялось большое внимание. Назначенный по приказу Католикоса на должность учителя музыки, Комитас незамедлительно приступил к обучению студентов европейской системе нотации, ибо только через нее было возможно приобщиться к мировой музыкальной культуре.

III. Благодаря М. Хримяну в армянскую церковь вошло многоголосие. Тем самым был дан мощный толчок и открылись новые перспективы для развития армянской музыки.

Патриаршим кондаком (приказом) от 7 июня 1895 года (№ 325) Католикос дал разрешение на печатание и исполнение «Сурб Патарага (Божественной Литургии)» Макара Екмаляна во всех армянских церквях.

Анна Асатрян – д. иск., проф., заслуженный деятель искусств РА, заместитель директора Института искусств НАН РА, заведующая отделом музыки. Научные интересы: исследование армянской музыки нового и новейшего времени. Автор 12 монографий и около 160 статей. instart@sci.am

CATHOLICOS OF ALL ARMENIANS MKRTICH I VANETSI KHRIMYAN AND ARMENIAN MUSIC

ANNA ASATRYAN

S u m m a r y

Key words: Catholicos of All Armenians Mkrtich I Vanetsi Khrimyan, Arshak Chopanyan, Komitas, Etchmiadzin Theological Seminary, M. Yekmalyan's "Patarag", Patriarchal Order, introduction of polyphony to the Armenian Church, Armenian music.

During the past decades, numerous monographs and articles on the life and activities of the Catholicos of All Armenians Mkrtich I Vanetsi Khrimyan (1820–1907) were written. Nonetheless, to date, no specific research has been conducted to evaluate the impact he had on Armenian music. Meanwhile, the Catholicos – a zealous advocate of Armenian culture, who initiated and fulfilled extensive national and educational programs during his pontificate (1892–1907), played an essential and priceless part in the development of Armenian music.

I. It is hard to overestimate the role of His Holiness in revealing and promoting Komitas' progress as an individual and musician. M. Khrimyan was anointed Catholicos in the Mother See of Etchmiadzin on 26 September, 1893 (coincidentally, on Komitas' birthday). From that day on and until his death, the Catholicos showed his heartfelt attitude to Komitas, highly appreciating his personality and activities. According to the verbal order of the Catholicos and in his presence, on 11 September 1894, deacon

Soghomon Soghomonyan was ordained as a monk and according to the will of the Catholicos – named after the 7th century Catholicos Komitas I Aghtsetsi who, in addition to his multiple talents, was also a renowned poet and musician. It was with the blessing of M. Khrimyan that Komitas chose to study music. Subsequently, he related, "Hadn't the fate smiled at me, and I wouldn't have gone to Holy Etchmiadzin, then, with the support of my dear benefactor Mr. Alexander Mantashyan, traveled to Germany, I'd have stayed in my native Kutina and become none other than a shoemaker, like my father's brother Harutyun, who took care of me as an orphan". It should be noted, M. Khrimyan was the one who encouraged Alexander Mantashyan to sponsor Soghomon Soghomonyan's study in Germany.

Shortly after M. Khrimyan's death, Komitas had to leave Etchmiadzin.

II. Throughout M. Khrimyan's pontificate, much attention was paid to teaching music at the Etchmiadzin Theological Seminary. Komitas, the newly appointed music teacher, did not hesitate to start familiarizing the students with the European system of notation, since only through that knowledge it was possible to access the world music culture.

III. Thanks to the Catholicos of All Armenians Mkrtich I Khrimyan, polyphony was introduced to the Armenian Church, thereby opening vast horizons for the rapid progress of Armenian music.

By Patriarchal Order (#325) as of 7 June 1895, the Catholicos gave his permission to print Makar Yekmalyan's "Surb Patarag [Divine Liturgy]" and celebrate it in all the Armenian churches.

Anna Asatryan – Doctor of Sciences in Arts, Professor, RA Honored Worker of Arts, Deputy Director of the NAS RA Institute of Arts, Head of the Department of Music. Scientific interests: study of Armenian music of the new and newest periods. Author of 12 monographs and over 160 articles. instart@sci.am